Առաջին անգամ Արցախում

Արցախի լուսավորության վարչության առաջարկով եւ ՀՀ կրթության նախարարության որոշմամբ այս տարի առաջին անգամ դպրոցականների հանրապետական օլիմպիադան Արցախի սովորողների համար անց էր կացվում Ստեփանակերտի թիւ 2 դպրոցում:

Տարբեր շրջաններից այստեղ էին հավաքվել շրջանային օլիմպիադաների հաղթողները. դասախոսներ, լուսավորության բնագավառի այլ աշխատողներ: Օլիմպիադան կազմակերպված էր ֆիզիկայից, քիմիայից, մաթեմատիկայից, ինֆորմատիկայից, կենսաբանությունից եւ աշխարհագրությունից: Հաշվի առնելով մարզի ներկայի վիճակը մարզային լուսավորության վարչությունը որոշել էր օլիմպիադաներն անցկացնել նույն օրը, նույն դպրոցում, միաժամանակ: Մարտի 26-ին ժամը 11-ին մասնակիցները դպրոցում էին: Մարզի ներքին գործերի աշխատողները իրենց վրա էին վերցրել սովորողներին ապահով Ստեփանակերտ հասցնելու գործը:

Միջոցառումը անցավ կազմակերպված եւ տոնական մթնոլորտում:

Ապրիլի կեսերին, երբ համապատասխան հանձնաժողովները քննարկեցին արդյունքները, պարզվեց, որ սովորողներից շատերը, պարզվեց, որ բոլոր առաջադրանքները հաղթահարել են ըստ տեղծագործաբար, եւ առանձին խնդիրներ լուծել են ոչ ստանդարտ մեթոդներով:

Մասնակիցներից տասը հոգի պարգեւատրվել են 1, 2 եւ 3-րդ կարգի դիպլոմներով, իսկ 20 հոգի տարբեր տիպի գովասանագրերով:

ՀՀ Լուսավորության նախարարությունում դրվատանքի արժանացավ Արցախի լուսավորության բնագավառի աշխատողների աշխատանքը, եւ հատկապես արցախյան այս ծանր օրերին, երբ ամեն ինչ անում են իրենց աշակերտներին կուռ եւ հիմնավոր գիտելիքներ հաղորդելու համար:

Հավով պետք է նշել նաեւ, որ շրջափակման եւ արտակարգ դրության պայմանները հնարավորություն չտվեցին Շահումյանի եւ Մարտունու շրջանի լավագույն աշակերտներին մասնակցելու այս միջոցառմանը, քանի որ ադրբեջանական Ամոնականները այդ օրերին փակել էին այդ շրջանները Ստեփանակերտին կապող ճանապարհները, իսկ ներքին կորքերի ատորաբաժանումների ղեկավարները երթեւեկության անվտանգությունը չէին ապահովում:

Թղթակից